

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն N°)

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

Ուսումնառության մասին

ք.Երևան

---,---,-----թ.

„Հայաստանի ազգային ագրարային համալսարան,, հիմնադրամը (ՀԱԱՀ) (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս ռեկտոր Արշալույս Թարվերդյանի, ով գործում է համաձայն հիմնադրամի կանոնադրության եմ կողմից և _____ ֆակուլտետի _____ մասնագիտության _____ կուրսի ուսանող/ուհի _____

(այսուհետ՝ Ուսանող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ պայմաններով

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Սույն պայմանագրի իրավական հիմքերն են ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը <<Կրթության մասին>>, <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության որոշումները, <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան>> հիմնադրամի կանոնադրությունը, Համալսարանի ներքին կարգապահական կանոնները, Համալսարանի ներքին իրավական ակտերը և այլ իրավական ակտեր:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

2. Սույն պայմանագրի առարկան Ուսանողի՝ _____ ձևով, _____
/Առկա, հեռակա/ / Բակալավր, մագիստրատուրա/

կրթական ծրագրով ուսումնառություն իրականացնելու կարգն ու պայմաններն են:

3. Ուսանողի ուսումնառության ժամկետը _____ տարի _____ ամիս է:

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

- 4. Իր ինքնավարության շրջանակներում կազմակերպել ուսումնական գործընթաց՝ այդ թվում ուսանողների ատեստավորման ձևերը և կարգը, ըստ գործող ուսումնական պլանների և չափորոշիչների:
- 5. Օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով, այլ իրավական ակտերով սահմանված պարտականությունները չկատարելու կամ խախտելու, ինչպես նաև ակադեմիական անբավարար առաջադիմության դեպքում ուսանողի նկատմամբ կիրառել կարգապահական պատասխանատվության միջոցներ, ընդհուպ համալսարանից հեռացնելը:
- 6. Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում ուսման վարձը վճարելու դեպքում ուսանողին հեռացնել համալսարանից:

4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է

- 7. Կազմակերպել ուսանողի ուսուցումը՝ սահմանված կարգով հաստատված ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համաձայն:
- 8. Ուսումնառության տարիներին ստեղծել ուսումնական ծրագրով նախատեսված ուսումնական գործընթացն ապահովող հնարավոր բոլոր պայմանները:
- 9. Ուսանողներին ծանոթացնել համալսարանի ներքին կարգապահական կանոններին և այլ ակտերին:
- 10. Ուսումնառությունն ավարտելու և ամփոփիչ ատեստավորումը հաջողությամբ անցնելու դեպքում ուսանողին շնորհել ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ:

5. ՈՒՍԱՆՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

11. Մասնակցել ուսումնագիտական, հետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և այլ միջոցառումներին:
12. Օգտվել համալսարանի հանրակացարանից, հանգստյան տնից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական և այլ ստորաբաժանումների ծառայություններից:
13. Սահմանված կարգով մասնակցելու համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին:
14. Ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոններին և այլ փաստաթղթերին:
15. Ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար սահմանված կարգով ստանալ բարոյական և (կամ) նյութական խրախուսանք:

6. ՈՒՍԱՆՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է

16. Սահմանված կարգով և ժամկետում կատարել ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով նախատեսված բոլոր առաջադրանքները, անցնել ատեստավորումներ, պարտադիր հաճախել դասերին:
17. Սահմանված կարգով և ժամկետում մուծել ուսման վարձը:
18. Պահպանել համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոնները:

7. ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Վճարովի հիմունքներով սովորող ուսանողի ուսման տարեկան վարձը համալսարանի կողմից սահմանվում է _____ դրամ, եթե նա չի օգտվում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցումից:
20. Սահմանված ուսման վարձը հաստատուն է ուսանողի ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար: Համալսարանից հեռացված (ազատված), ուսումնական ծրագիրը չավարտելու պատճառով կրկնակի ուսուցման թողնված

այնուհետև սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնած ուսանողները ուսման վարձը վճարում են նոր պայմանագրով սահմանված չափով:

21. 1-ին կուրսի 1-ին կիսամյակի վարձը պարտադիր ենթակա է վճարման առկա ուսուցման ձևով սովորողները մինչև սեպտեմբերի 15-ը, իսկ հեռակա ուսուցման ձևով ուսումնական պարապմունքների սկզբից մեկ շաբաթ առաջ: Յուրաքանչյուր ուսումնական տարի ուսման վարձի վճարման ժամկետ է սահմանվում առաջին կիսամյակի համար մինչև նոյեմբերի 1-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև ապրիլի 1-ը:
22. Ուսման վարձը վճարվում է կանխիկ՝ համալսարանի դրամարկղ կամ անկանխիկ՝ սույն պայմանագրով նախատեսված համալսարանի հաշվարկային հաշվին: Ուսանողը պարտավոր է վճարման անդորրագիրը ներկայացնել համապատասխան դեկանատ:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

23. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է տվյալ կրթական ծրագրով և ուսուցման պլաններով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի համար:
24. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել՝ կողմերի պայմանագրով ստանձնած պարտականությունները չկատարելու, ուսանողի նախաձեռնությամբ, համալսարանից ուսանողի հեռացման դեպքերում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

9. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

25. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
26. Ուսանողն իրավունք ունի ստանալու ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
27. Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ

դրսևորելու համար: Պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է ՀՀ կառավարությունը:

28. Ուսանողի կողմից սույն պայմանագիրը միակողմանի լուծելու կամ ուսանողի հեռացման դեպքում տվյալ կիսամյակի վճարված ուսման վճարը չի վերադարձվում:

29. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

30. Ուսանողը ծանոթացել է համալսարանի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոնակարգին, ուսումնական գործընթացն ապահովող իրավական ակտերին, որը հավաստում է սույն պայմանագիրը ստորագրելով:

31. Սույն պայմանագիրը կազմված է 3 (երեք) հավասարազոր օրինակից, որոնց մեկ օրինակը հանձնվում է ուսանողին, իսկ երկու օրինակը՝ համալսարանին:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռեկտոր

Արշալույս Թարվերդյան

_____ (ստորագրություն և կնիք)

Հասցե՝ ՀՀ ք. Երևան Տերյան 74

HSBC բանկ
Հ/Հ 001-178771-001
Արդշինիկեստբանկ
Հ/Հ 247010053103

_____ (ամսաթիվ)

ՌԻՍԱՆՈՂ

_____ (ազգանուն, անուն, հայրանուն)

_____ (ստորագրություն)

_____ (անձնագրի թիվը, երբ և ում կողմից է տրված)

_____ (հասցե և հեռախոս)

Համաձայն եմ՝ _____

(Եթե պայմանագիր կնքելու պահին չի լրացել ուսանողի 18 տարին՝ նաև նրա ծնողի կամ խնամակալի կամ հոգաբարձուի համաձայնությունը)